

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ
ԻՆՔԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գործունեության 2002 թվականի տարեկան

ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2003 թ.

- ✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր տնօրենի ուղերձի խոսքը
 - ✓ ԳԼՈՒԽ 1. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության նախապատմությունը
 - ✓ ԳԼՈՒԽ 2. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կառուցվածքը և կառավարման մարմինները
 - ✓ ԳԼՈՒԽ 3. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կողմից 2002 թվականի ընթացքում մատուցված ծառայությունները և կատարած աշխատանքները
 - ✓ ԳԼՈՒԽ 4. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության ապագայի ծրագրերը
 - ✓ ԳԼՈՒԽ 5. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության 2002 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, գործունեության վերաբերյալ անկախ առողջառի եզրակացությունը
- ✓ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր տնօրենի ուղերձի խոսքը

Հարգելի բողարկող և ներդրող

Ամփոփելով հաշվետու տարվա արդյունքները, կարելի է վստահությամբ նշել, որ անցած 2002 թվականը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության համար եղել է բարենպաստ՝ նոր գործընկերների ձեռքբերման, մատուցվող ծառայությունների որակական հատկանիշների բարձրացման, առաջարկվող ծառայությունների սպեկտրի ընդլայնման և գործարար շրջանակներում դեպոզիտար համակարգի նկատմամբ հուսալիության աստիճանի մեծացման գործերում:

Հայաստանի Հանրապետությունն այսօր առանձնահատուկ ուշադրության է արժանացնում արժեքրերի շուկայում ներդրողների օրինական շահերի պաշտպանության հետ կապված հիմնախնդիրներին: Արժեքրերի շուկայում ներդրողների օրինական շահերի պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների լուծման կարևորագույն միջոց է հանդիսանում անվանական արժեքրերի սեփականատերերի ռենստրի վարման գործը երրորդ կազմակերպությանը վստահելը:

Անվանական արժեքրերի սեփականատերերի ռենստրի վարման մեխանիզմը հիմնականում կիրառվում է յուրաքանչյուր բողարկողի արժեքրերի սեփականատերերի մասին առկա տեղեկությունների հավաքագրման, նորացման և պահպանման նպատակով:

Այսօր, բազմաթիվ երկրներում ռենստրի հավաքման և այն բողարկողից ստանալու պարտավորությունը հաջողությամբ իր վրա է վերցնում դեպոզիտար համակարգը: Որպես կանոն, նման պատկերն առկա է այն երկրներում, որոնք ունեն կենտրոնացված դեպոզիտարիա: Ըստ հաճախ այդ նույն երկրներում դեպոզիտարային և հաշվարկաքիրինգային աշխատանքները կենտրոնացված են մեկ համակարգում:

Ներկայումս Հայաստանը նույնպես որդեգրել է ռենստրի վարման դեպոզիտարային և հաշվարկաքիրինգային գործունեությունը մեկ կենտրոնից իրականացնելու ինստիտուտի մողելը: Նշված գործառույթները Հայաստանում իրականացվում է Հայաստանի արժեքրերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից հիմնադրված և իմ կողմից դեկավարվող Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կողմից:

Զեր դատին ներկայացնելով հաշվետվություն՝ ես ակնկալում եմ Զեր վստահությունը մեր հետագա համագործակցության ընթացքում, ինչպես նաև հույս եմ հայտնում մեր համագործակցության նորանոր եղբերի բացահայտման, նպաստավոր գործի ի կատար ածմանը:

Մենք հավատում ենք մեր հայրենիքի բարգավաճմանն ու հզորացմանը, և լավատեսորեն ենք տրամադրված ապագայի նկատմամբ:

Կանխավ շնորհակալություն
համագործակցության համար

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն

Հ. Նավասարդյան

ԳԼՈՒԽ 1. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության նախապատմությունը

Հայաստանի Հանրապետության Կառավարության 10.01.1996 թ թիվ 4 որոշմամբ ստեղծվել էր «Ազգային կենտրոնացված ռեեստր» պետական ձեռնարկությունը, որն իրականացնում էր անվանական արժեթղթերի ռեեստրի վարումը: Այդ ընթացքում ռեեստրի վարում կարող էին իրականացնել նաև բողարկողները և անկախ ռեեստրավարները, ինչը բացառում էր ՀՀ տարածքում արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման համակարգի ստեղծումը:

Իր գործունեության ընթացքում «Ազգային կենտրոնացված ռեեստր» ՊԶ-ի հետ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիր էին կնքել թվով 44 բողարկող:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 08.04.1999թ. թիվ 211 որոշմամբ «Ազգային կենտրոնացված ռեեստր» ՊԶ-ն վերակազմակերպվել է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» պետական փակ բաժնետիրական ընկերության, որի միակ հիմնադիրն էր Հայաստանի Հանրապետությունը: Այն կոչված էր իրականացնել ռեեստրավարման, պահառության և հաշվարկաքիրինգային գործառույթներ: Համաձայն վերոհիշյալ որոշման, ՀՀ տարածքում գործող բոլոր բաց բաժնետիրական ընկերությունները պարտավոր էին իրենց բաժնետերի ռեեստրների վարումն իրականացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՊՓԸ-ի միջոցով: Այս որոշումը, փաստորեն, առաջին քայլն էր ուղղված Հայաստանում կենտրոնացված պահառության և ռեեստրավարման համակարգերի ստեղծմանը:

Իր գործունեության ընթացքում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ն ռեեստրի վարման ծառայություն էր մատուցում թվով 392 բողարկողների:

2000 թվականի օգոստոս ամսին ուժի մեջ մտած «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) Հայաստանի Հանրապետության տարածքում կենտրոնացված պահառուի, արժեթղթերի ռեեստրավարի և հաշվանցման ու վերջնահաշվարկի գործառույթների իրականացման բացառիկ իրավասությունը վերապահեց Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային, որի անդամ կարող են լինել արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք, ֆոնդային բորսան, առևտրային բանկերը և ՀՀ Կենտրոնական բանկը:

Համաձայն Օրենքի, 2001 թվականին հայտարարվեց մրցույթ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ի պետական բաժնետոմսերը համապատասխան ինքնակարգավորվող կազմակերպությանը անհատույց փոխանցելու վերաբերյալ: Մրցույթում հաղթող ճանաչվեց միակ թեկնածուն՝ «Հաշվարկների իրականացման կենտրոն» ինքնակարգավորվող կազմակերպությունը, որին անհատույց փոխանցվեց «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ի պետական բաժնետոմսերը և իրավունք վերապահվեց Օրենքով ասհմանված կարգով գործել որպես Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպություն (այսուհետ՝ Դեպոզիտարիա):


Հայաստանում կենտրոնացված պահառության, ռեեստրավարման և հաշվանցման ու վերջնահաշվարկի գործառույթներ իրականացնող մարմնի ձևավորման ու գարգացման

գործում իր ուրույն տեղն ունի ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Փրայսութերհառությունի ընկերության կողմից 1998-2001թթ. իրականացված Հայաստանի Հանրապետության կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը, որը նոր որակ ստացավ 2002 թ-ին՝ իրականացնելով Հայաստանի կապիտալի շուկայի զարգացման 2002-2005թթ. ծրագիրը:

Դեպոզիտարիան շահույթի նպատակ չհետապնդող ինքնակարգավորվող կազմակերպություն է, որի գործունեությունից գոյացած ողջ շահույթը ուղղվում է քիրինակի և վերջնահաշվարկների համակարգի զարգացմանը և Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների բարելավմանը: Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների գների առավելագույն չափերը կարգավորվում են ՀՀ Արժեքդրերի համաձնաժողովի կողմից:

ԳԼՈՒԽ 2. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կառուցվածքը և կառավարման նարմինները

Դեպոզիտարիան արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ֆոնդային բորսայի և բանկերի (այդ թվում ՀՀ կենտրոնական բանկի) կամավոր միավորում է, որին անդամակցելու, անդամության կասեցման, դադարեցման և անդամությունը չեղյալ հայտարարելու հետ կապված հարցերն իրենց կարգավորումն են ստացել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի անդամակցության կանոնակարգում և այլ կանոններում: Դեպոզիտարիան ունի կառավարման հետևյալ կառուցվածքը:



Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովը

Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովը նրա կառավարման բարձրագույն մարմինն է, որն իրականացնում է կազմակերպության դեկավարումը՝ տարեկան կամ արտահերթ ժողովներ գումարելու միջոցով։ Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովը գումարվում է դիտորդ խորհրդի կողմից դեպոզիտարիայի հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 2 ամսվա ընթացքում, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել նաև արտահերթ ժողովներ՝ անհետաձգելի հարցերի քննարկման նպատակով։

Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում երկու խումբ հարցեր՝

- հարցեր, որոնց շուրջ որոշումներ կայացնելու բացառիկ իրավասությունը պատկանում է դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովին, և
- հարցեր, որոնք դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունների մեջ չեն մտնում, սակայն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ կարող են կայացնել ժողովը։

Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովն իրավագոր է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում են ձայնի իրավունք ունեցող անդամների առնվազն երկու երրորդը և անդամների ընդհանուր ժողովի անցկացման օրվա դրությամբ առկա են այնպիսի փաստարդեր, որոնք վկայում են այն մասին, որ Դեպոզիտարիայի բոլոր անդամները տեղեկացված են անդամների ընդհանուր ժողովի անցկացման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ։ Ըստումի բացակայության դեպքում ժողովը համարվում է չկայացած։ Չկայացած ժողովի ամսաթից հաշված 14-րդ օրը գումարվում է կրկնակի ժողով, որը իրավագոր է հարցեր քննարկել, եթե պահպանվել են վերը նշված պահանջները։ Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովում Դեպոզիտարիայի անդամին ներկայացնում է տվյալ անդամի դեկավարը կամ այլ լիազորված անձը։

Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովը իր բացառիկ իրավասությանը վերապահված հարցերով որոշումներն ընդունում է ժողովին մասնակցող անդամների ձայնների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով, իսկ այլ հարցերի շուրջ որոշումները կարող են ընդունվել ձայնների պարզ մեծամասնությամբ։ Դեպոզիտարիայի յուրաքանչյուր անդամը և նրա հետ փոխկապակցված անձինք Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովում ունեն միայն մեկ ձայն։ Փոխկապակցվածության հիմքերի բացահայտման պահից 30 օրվա ընթացքում Խորհուրդը պարտավոր է միավորել փոխկապակցված անձանց ձայնները (ձայնների միավորում)՝ նրանց վերապահելով միայն մեկ ձայնի իրավունք։

Դեպոզիտարիայի անդամների արտահերթ ընդհանուր ժողովները կարող են գումարվել Դիտորդ խորհրդի որոշմամբ կամ Դեպոզիտարիայի բոլոր անդամների 20 տոկոսից ոչ պակասի պահանջով, որի օրակարգը ձևավորվում է արտահերթ ժողովը գումարելու նախաձեռնությունը ցուցաբերած կողմից առաջակույթ։ Արտահերթ ժողովի օրակարգը Դիտորդ խորհրդի կողմից հաստատելուց հետո ևս փոփոխման ենթակա չէ։

Դեպոզիտարիայի դիտորդ խորհուրդը

Դեպոզիտարիայի դիտորդ խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Դեպոզիտարիայի կառավարման կողեզիալ մարմինն է, որն իրականացնում է Դեպոզիտարիայի գործունեության ընդհանուր դեկավարումը։ Այն բաղկացած է 7 (յոթ) անդամից՝ Խորհրդի նախագահ և 6 (վեց) անդամ։ Խորհրդի անդամների ընտրության կարգը և իրավասությունները սահմանվում են Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի կողմից 25.04.2002թ-ին ընդունված «Դիտորդ Խորհրդի և դիտորդ խորհրդի նիստերի

մասին» կանոնակարգով, համաձայն որի Խորհրդի անդամներ կարող են լինել միայն Դեպոզիտարիայի անդամների ներկայացուցիչները, որոնք ընտրվում են Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի կողմից: Խորհրդի նախագահը և անդամներն ընտրվում են Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի կողմից ճայների առնվազն 2/3-ով՝ մեկ տարի ժամկետով:

Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ հանդիսանալ Դեպոզիտարիայի Գործադիր տնօրեն և պետք է ունենա այնպիսի մասնագիտական որակավորում, որը պահանջվում է մասնագիտացված անձի կազմում կամ նրա անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանցից: Խորհրդի կազմում կարող է ընդգրկվել Դեպոզիտարիայի յուրաքանչյուր անդամի միայն մեկ ներկայացուցիչ:

Խորհրդի անդամները իրենց գործունեության համար չեն վարձատրվում:

Խորհրդի բացառիկ իրավասության են պատկանում՝ Դեպոզիտարիայի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշիռների և ֆինանսական այլ հաշվետվությունների նախնական հաստատումը, Դեպոզիտարիայի շահույթի օգտագործման ուղղությունների նախնական հաստատումը, Գործադիր տնօրենի կողմից ներկայացվող ընթացիկ և հեռանկարային ծրագրերի, դրանցում փոփոխությունների և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը, Գործադիր տնօրենի կողմից ներկայացվող Դեպոզիտարիայի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեկավարների պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը, Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը, Դեպոզիտարիայի անդամների ընդունումը, Գործադիր տնօրենի նշանակումը և նրա լիազորությունների դադարեցումը, Գործադիր տնօրենի գործունեության վերահսկողությունը և նրա կողմից ներկայացված հաշվետվությունների ընդունումը (հաշվետվական վերահսկողություն), Դեպոզիտարիայի տարեկան բյուջեի նախագծի նախնական հաստատումը, Դեպոզիտարիայի կառուցվածքի և աշխատակազմի հաստիքացուցակի հաստատումը, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշումներով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և Դեպոզիտարիայի կանոնադրությամբ վերապահված են Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությամբ:

Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են Խորհրդի անդամների թվի կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նրա անդամների ճայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ճայնի իրավունք, իսկ ճայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ճայնը որոշչի է:

Խորհրդի նախագահի ընտրությունը, ի տարբերություն անդամների ընտրության, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, Խորհրդի նախագահի թեկնածուն Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի հավանությանն է ներկայացնում Դեպոզիտարիայի մեկ տարվա գործունեության ծրագիր: Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի կողմից ծրագիրն ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքում այն ներկայացնող թեկնածուն համարվում է ընտրված Խորհրդի նախագահի պաշտոնում: Խորհրդի նախագահի երկու և ավելի թեկնածուների դեպքում Խորհրդի նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որի կողմից ներկայացված ծրագիրն ընդունվել է առավելագույն ճայներով:

Խորհրդի նախագահն ունի հետևյալ իրավասություններ՝ կազմակերպել Խորհրդի նիստերի իրավիրումը, անցկացնումը և քննարկող հարցերի վերաբերյալ նյութերի նախապատրաստումը, ստորագրել Խորհրդի որոշումները և արձանագրությունները, կազմակերպել Խորհրդի կողմից ընդունվող որոշումների կատարումը և վերահսկել դրանց կատարումը, խորհրդակցելով Խորհրդի անդամների հետ՝ բաշխել նրանց միջև պարտականությունները, կազմակերպել Դեպոզիտարիայի անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղված աշխատանքներ, կազմակերպել

պետական և հասարակական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների, մասնագիտացված անձանց, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ Դեպոզիտարիայի համագործակցությանն ուղղված աշխատանքները, ներկայացնել Դեպոզիտարիայի շահերը Կանոնադրությամբ, Դեպոզիտարիայի անդամների ընդիանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, ներառյալ՝ Դեպոզիտարիայի անունից համապատասխան պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, դեպոզիտարիայի անդամների ընդիանուր ժողովում ներկայացնել խորհրդի աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև իրականացնել Դեպոզիտարիայի կանոններով և անդամների ընդիանուր ժողովի կողմից սահմանված այլ գործառույթներ:

Բացի վերը բվարկված իրավունքներից Խորհրդի անդամները և նախագահը ունեն մի շարք պարտականություններ, մասնավորապես, նրանք պարտավոր են անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի բացառեն Դեպոզիտարիայի անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց (ներառյալ համապատասխան պաշտոններում ընդգրկված՝ Դեպոզիտարիայի անդամների ներկայացուցիչների) կողմից Դեպոզիտարիայի գործառույթների իրականացման ընթացքում գաղտնի տեղեկատվության ուղղակի կամ անուղղակի ստացման հնարավորությունը, պահպանել և ապահովել Դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի գործառույթների իրականացմանն առնչվող տեղեկությունների գաղտնիությունը և այլն:

Դեպոզիտարիայի վերահսկիչ ծառայությունը

Դեպոզիտարիայի գործունեության ներքին վերահսկումն իրականացնում է Դեպոզիտարիայի վերահսկիչ ծառայությունը (այսուհետ՝ Վերահսկիչ ծառայություն), որը կողեզիալ մարմին է և գործում է Դեպոզիտարիայի անդամների ընդիանուր ժողովի կողմից 25.04.2002թ. հաստատված «Վերահսկիչ ծառայության մասին» կանոնակարգի հիման վրա: Այն կազմված է ծառայության ղեկավարից և երկու անդամներից, որոնք գաղտնի քվեարկությամբ ընտրվում են անդամների ընդիանուր ժողովի կողմից երեք տարի պաշտոնավարման ժամկետով՝ ժողովին մասնակցող անդամների ճայների 2/3-ով:

Իր վրա դրված պարտականությունների իրականացման նպատակով Վերահսկիչ ծառայությունն իր իրավասությունների շրջանակներում վերահսկողությունն իրականացնում է երկու հիմնական ուղղություններով.

- ա) ներքին վերահսկողություն և
- բ) արտաքին վերահսկողություն:

Ներքին վերահսկողության իրականացման նպատակն է բացահայտել Դեպոզիտարիայի գործունեության ընթացքում «Արժեքրդերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ արժեքրդերի հանձնաժողովի որոշումներով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջների խախտումները կամ թերացումները և ժամանակին վերացնել բացահայտված խախտումները կամ թերացումները: Իսկ արտաքին վերահսկողության իրականացման նպատակն է Դեպոզիտարիայի անդամների կամ նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց գործունեության ընթացքում «Արժեքրդերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ արժեքրդերի հանձնաժողովի որոշումներով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջների խախտումները կամ թերացումները բացահայտելը և դրանք ժամանակին վերացնելը:

Վերահսկիչ ծառայությունն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերի գումարման պարբերկանությունը հաստատվում է ծառայության աշխատանքային ծրագրին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր, ՀՀ արժեքրդերի հանձնաժողովի, Խորհրդի, Գործադիր

տնօրենի, Դեպոզիտարիայի անդամի, ծառայության դեկավարի կամ որևէ անդամի պահանջով, անհրաժեշտ հիմնավորմամբ:

Դեպոզիտարիայի գործադիր մարմինը

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի գործադիր մարմնի լիազորությունները իրականացնում է Դեպոզիտարիայի գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն), որն իր իրավասությունների սահմաններում իրականացնում է ընկերության բոլոր ընթացիկ գործերի օպերատիվ դեկավարումը:

Գործադիր տնօրենին նշանակվում է և նրա լիազորությունները դադարեցվում են Խորհրդի կողմից, իսկ նրա հետ Խորհրդի անունից աշխատանքային պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահը: Գործադիր տնօրենը հաշվետու է միայն Խորհրդին:

Դեպոզիտարիայի գործադիր տնօրենը, ինչպես նաև Դեպոզիտարիայի ցանկացած այլ պաշտոնատար անձ կամ աշխատակից իրավունք չունեն լինել որևէ մասնագիտացված անձի կամ դրա հետ փոխկապակցված անձանց անդամ, պաշտոնատար անձ, աշխատակից կամ մասնակից, բացառությամբ Խորհրդի անդամների կամ նախագահի: Դեպոզիտարիայի գործադիր տնօրեն չեն կարող հանդիսանալ Դեպոզիտարիայի անդամների տնօրեններն ու այլ դեկավարները, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձինք:

Գործադիր տնօրենի իրավասությունների մեջ մտնող գործառույթները բաժանվում են երեք խմբի՝

- Գործադիր տնօրենի կողմից Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացվող հարցեր,
- Գործադիր տնօրենի կողմից պատրաստվող և Խորհրդի նախնական հաստատմանը ներկայացվող փաստարդեր և
- Գործադիր տնօրենի կողմից իրականացվող կազմակերպատնօրինչական գործառույթներ:

Գործադիր տնօրենի կողմից Դեպոզիտարիայի անդամների ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացվող հարցերի թվին են դասվում՝ Խորհրդի կողմից նախնական հաստատված Դեպոզիտարիայի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, այդ թվում հաշվապահական հաշվեկշիռները և ֆինանսական այլ հաշվետվությունները, Խորհրդի կողմից նախնական հաստատված Դեպոզիտարիայի շահույթի օգտագործման նախնական ուղղությունները:

Գործադիր տնօրենի կողմից պատրաստվող և Խորհրդի նախնական հաստատմանը ներկայացվող փաստարդերն են՝ Դեպոզիտարիայի աշխատանքային կանոնակարգը, Դեպոզիտարիայի գործունեության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, դրանցում փոփոխությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները, Դեպոզիտարիայի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, այդ թվում հաշվապահական հաշվեկշիռները և ֆինանսական այլ հաշվետվությունները, Դեպոզիտարիայի շահույթի օգտագործման հետ կապված որոշման նախագծերը, Դեպոզիտարիայի տարեկան բյուջեի նախահաշիվը, մասնաճյուղեր և ներկայացուցություններ հիմնադրելու առաջարկությունները, դրանց կանոնադրությունների և ներքին կանոնակարգերի նախագծերը, ինչպես նաև գործունեության տարեկան արդյունքները, մասնաճյուղերի և ներկայացուցությունների դեկավարների պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման վերաբերյալ Խորհրդի որոշումների նախագծերը:

Գործադիր տնօրենի կողմից իրականացվող կազմակերպատնօրինչական գործառույթներն են՝ Դեպոզիտարիայի գործունեության ընթացիկ ծրագրերի և Դեպոզիտարիայի բնականոն գործունեության իրականացման և ապահովման համար

անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը, Դեպոզիտարիայի գործունեության ծրագրերի կատարման ընթացիկ հսկողության իրականացումը, տարեկան բյուջեի նախագծի մշակումը և կատարման նկատմամբ ընացիկ հսկողության իրականացումը, մասնաճյուղերի և ներկայացուցությունների դեկավարմների նշանակման և պաշտոնից ազատման, ինչպես նաև ոչ առևտրային այլ կազմակերպություններում Դեպոզիտարիայի մասնակցության մասին որոշումների նախագծերի մշակումը և Խորհրդի հաստատմանը ներկայացումը, տարեկան և արտահերթ ընդիհանուր ժողովների անցկացման մասին Դեպոզիտարիայի անդամներին տեղեկացումը, Դեպոզիտարիայի անդամներին տարեկան և արտահերթ ընդիհանուր ժողովների և Խորհրդի որոշումների մասին տեղեկացումը և Խորհրդի հետ համատեղ այդ որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, Դեպոզիտարիայի անդամներին ընդիհանուր ժողովների և Խորհրդի որոշումների իրագործումը և համապատասխան հաշվետվությունների ներկայացումը, Դեպոզիտարիայի գույքը և ֆինանսական միջոցների տնօրինումը՝ Կանոնադրությանը, Դեպոզիտարիայի այլ կանոններին և Դեպոզիտարիայի անդամների ընդիհանուր ժողովի կողմից հաստատված՝ բյուջեին համապատասխան, Դեպոզիտարիայի անունից գործարքների կնքումը, Դեպոզիտարիայի անունից առանց լիազորագրի գործելը և լիազորագրեր տալը, Դեպոզիտարիան Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում ներկայացնելը, Դեպոզիտարիայի անունից բանկային հաշիվների բացումը, Դեպոզիտարիայի աշխատակիցների իրավունքների և պարտականությունների շրջանակների որոշումը, նրանց գործունեության վերահսկումը, աշխատանքի ընդունելը և աշխատանքից ազատելը, նրանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության և խրախուսման միջոցների կիրառումը, իր իրավասությունների սահմաններում Դեպոզիտարիայի աշխատակիցների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելը, հրամաններ արձակելը և կարգադրություններ տալը, խորհրդակցական ձայնի իրավունքով Դեպոզիտարիայի անդամների ընդիհանուր ժողովին և Խորհրդի նիստերին մասնակցելը, ինչպես նաև Դեպոզիտարիայի գործունեության հետ կապված այլ հարցերի լուծումը, որոնք անդամների ընդիհանուր ժողովի և Խորհրդի իրավասությունների մեջ չեն մտնում:

Դեպոզիտարիան ունի գործառնական երկու հիմնական ստորաբաժանումներ՝

- ա) ռեեստրի վարման և քիրինգի բաժին,
- բ) գործառնական բաժին:

Դեպոզիտարիայի հաճախորդների (քողարկողներ, գրանցված սեփականատերեր) կողմից Դեպոզիտարիային տրված հարցումները կամ հանձնարարագրերը անցնում են հսկողության քառասուհճան համակարգ՝

1. հաճախորդներից հանձնարարագրերի (հարցումների) ընդունում.
2. փաստաթղթերի փաթեթի մուտքագրում.
3. փաստաթղթերի փաթեթի գրանցում.
4. հանձնարարագրերի (հարցումների) ստուգում և վերջնական գրանցում ռեեստրում.

Վերը նշվածներից առաջինն ու երկրորդը իրականացվում է գործառնական բաժնի մասնագետների կողմից: Նրանք նախ և առաջ լսելով հաճախորդի ցանկությունները, օգնում են վերջիններիս լրացնել Դեպոզիտարիայի կողմից սահմանված հանձնարարագրերը (հարցումները): Այնուհետև ստացված փաստաթղթերի փաթեթները մուտքագրում են համակարգ: Այնուհետև մուտքագրված փաստաթղթերի փաթեթները գործառնական բաժնի պետի կամ նրա անմիջական հսկողությամբ բաժնի աշխատակցի կողմից գրանցվում են համակարգում և ստանում են դեռևս չկատարված կարգադրության կարգավիճակ: Այսքանից հետո փաստաթղթերի փաթեթները փոխանցվում են ռեեստրի վարման և քիրինգի բաժին: Ռեեստրի վարման և քիրինգի բաժնի պետի կամ նրա անմիջական հսկողությամբ բաժնի աշխատակցի կողմից ստուգվում է ներկայացված փաստաթղթերի փաթեթի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը, Դեպոզիտարիայի կանոններին, համակարգ մուտքագրված կարգադրության տվյալներին:

Ամիանապատասխանությունները չհայտնաբերելու դեպքում հարցումները (հանձնարարագրերը) վերջնական գրանցում են ստանում ռեեստրում: Այսքանից հետո հաճախորդին տրվում է ելքային փաստաթուղթ հանձնարարագրի (հարցման) կատարման վերաբերյալ:

Ընտրելով հանձնարարագրերի (հարցումների) մշակման քառաստիճան համակարգը, Դեպոզիտարիան նպատակ ունի առավելագույնս նվազեցնել մարդկային գործոնի վրա հիմնված ռիսկը, դրանով իսկ բարձրացնելով գործարար շրջանակներում իր հանդեպ ձևավորված վստահության աստիճանը:

ԳԼՈՒԽ 3. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կողմից 2002 թվականի ընթացքում մատուցված ծառայությունները և կատարած աշխատանքները

2002 և 2003 թվականների ընթացքում, ի համեմատ նախորդ ժամանակաշրջանի, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի կողմից մատուցված ծառայությունների և իրականացված գործառույթների առումով ակնհայտ աճի միտում է նկատվել: Մասնավորապես, զգալի աճ է նկատվում գրանցված սեփականատերերի կողմից անձնական հաշիվների բացման և բողարկողների հետ պայմանագրերի կնքման գործընթացների ցուցանիշներում: Զգալի տեղաշարժ կա նաև բողարկողների կողմից կորպորատիվ գործառույթներով և արժեթղթերի արգելադրմամբ պայմանավորված գործառնությունների ծավալների մեջ:

Դեպոզիտարիան հաշվետու ժամանակաշրջանում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ Օրենքի և այլ իրավական ակտերի շրջանակներում մատուցել է ծառայությունների հետևյալ տեսակները.

1. Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում եւ պահպանում,
 - 1.1 Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված ծառայություններ,
 - 1.2 Թողարկողի կորպորատիվ գործողությամբ պայմանավորված ծառայություններ,
 - 1.3 Գրանցված սեփականատերերի ցուցակի տրամադրում,
2. Գրանցված սեփականատերերին (անվանատերերին) մատուցվող ծառայություններ,
 - 2.1 Անձնական հաշվի բացում,
 - 2.2 Քարտում ներառված տեղեկությունների փոփոխություն,
 - 2.3 Արժեթղթերի փոխանցում,
 - 2.4 Արժեթղթերի արգելադրում,
 - 2.5 Արժեթղթերի արգելադրման դադարեցում,
 - 2.6 Արժեթղթերի հավաստագրերով կատարվող գործառնություններ,
 - 2.7 Ռեեստրից քաղաքացիների եւ գործառնությունների մասին տեղեկանքների տրամադրում,

3. Ֆոնդային բորսայում կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների որոշման եւ դրանց հաշվանցման (քլիրինգի) ծառայություններ,


Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կողմից վերը նշված ծառայությունների շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.


Անվանական արժեքների սեփականատերերի ռեեստրի վարում

Հաշվետու ժամանակաշրջանում Դեպոզիտարիան «Անվանական արժեքներերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիր» (այսուհետ՝ Պայմանագիր) է կնքել 187 բողարկողների հետ (բաց և փակ բաժնետիրական ընկերություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ): Նշված բողարկողներից 84-ը Օրենքի համաձայն հանդիսանում են հաշվետու բողարկողներ: Ինչպես երևում է Գծապատկեր 1-ում, այդ մեծությունը համապատասխանաբար կազմում է 45 և 55%: Այս տեսանկյունից օգտակար կլինի անդրադառնալ նաև ամսական կտրվածքով Պայմանագրերի կնքման ժամանակագրությանը: Այդ ընթացքը պատկերված է Գծապատկեր 2-ում:

Բացի այդ հարկ է նշել, որ այդ նույն ժամանակահատվածում Դեպոզիտարիայի հետ Պայմանագիրը լուծած ընկերությունների թվաքանակը բավականին փոքր է՝ թվով 58 բողարկողներ, որոնք Պայմանագիր էին կնքել տարբեր ժամանակահատվածներում: Վերոնշյալ երևույթները կարելի է բացատրել հետևյալ գործոններով: Նախ և առաջ, 2002 և 2003 թվականների ընթացքում զգալիորեն աճել է մասնավորեցվող ընկերությունների թվաքանակը, որը պայմանավորված է այդ ոլորտում տարվող պետական քաղաքականության արդյունավետությամբ: Երկրորդ հանգամանքը պայմանագրերի է ՀՀ Արժեքների հանձնաժողովի կողմից հաշվետու բողարկողների անվանական արժեքների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանն ուղղված միջոցառումների իրականացմար: Բացի այդ, ինչպես վերը նշեցինք, հաշվետու բողարկողի կարգավիճակին չհամապատասխանող ընկերությունների թանակը կազմում է 55%, որը պայմանավորված է, նախ և առաջ, Դեպոզիտարիայի կողմից առաջարկվող ծառայությունների մասնագիտական բարձր մակարդակով, գործարար շրջանակներում գոյություն ունեցող և ձևավորվող որոշակի սովորույթներով, և ինչպես նաև, Դեպոզիտարիայում գործող ծառայությունների մատչելիությամբ:

Գծապատկեր-1






Կորպորատիվ գործառնություններ

Անդրադառնալով Դեպոզիտարիայի հետ Պայմանագիր ունեցող թողարկողների կողմից կորպորատիվ գործառույթների արդյունքում կանոնադրական կապիտալների չափերի փոփոխություններին, կարելի է նշել, որ այդ ուղղությամբ գրանցվել են հետևյալ ցուցանիշները: 2002 և 2003 թվականների ընթացքում, ընդհանուր գումարային անվանական արժեքով հաշվարկված, մոտ 7.5 մլրդ ՀՀ դրամի չափով տեղի են ունեցել թողարկողների կանոնադրական կապիտալների ավելացումներ, իսկ կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված այդ ցուցանիշը կազմել է մոտ 363.5 մլն. ՀՀ դրամ: Բերված ցուցանիշները պատկերված են Գծապատկեր 3-ում: Այս կտրուկ տարբերությունները կարելի է բացարեկ թողարկողների կողմից դրամական կապիտալի նկատմամբ պահանջարկի մեծացմամբ:


Կորպորատիվ գործառնություն



Գրանցված սեփականատերերի անձնական հաշիվների քացում, տվյալների փոփոխություն և նույնացում

Ինչ վերաբերում է Դեպոզիտարիայում անվանական արժեքների սեփականատերերի կողմից կատարվող անձնական հաշիվների քացման, սեփականատերերի հաշիվների տվյալների փոփոխման և նույնացման հանձնարարականներին, ապա կարող ենք նշել, որ միայն 2002 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Դեպոզիտարիայում սեփականատերերի կողմից քացվել, ակտիվացվել և նույնացվել է շուրջ 11 000 անձնական հաշիվներ, իսկ 2003թ.-ին՝ 9060 : Այդ գործընթացը ժամանակագրական կտրվածքով բերված է Գծապատկեր 4-ում: Ինչպես երևում է նշված զծապատկերից 2002 թվականի հունիսից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում անվանական արժեքների սեփականատերերի կողմից նկատվել է քացահայտ ակտիվություն: Այդ գործընթացը կարելի է քացատրել մի կողմից երկրորդային շուկայում «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ի հասարակ անվանական քաժնետումների նկատմամբ ձևավորված գնողունակ պահանջարկի աճով, մյուս կողմից այդ ժամանակահատվածում համրապետությունում ընթացող զանգվածային սեփականաշնորհման արդյունքում առաջացած նոր սեփականատերերի քանակով:

Բացի վերոնշյալը կարևոր է նշել նաև, որ ներկայում Դեպոզիտարիայի հետ Պայմանագիր ունեցող բողարկողների գրանցաված սեփականատերերի զգալի մասը հակված են գործառնությունները իրականացնել քացառապես Դեպոզիտարիայում քացված անձնական հաշիվներով, որի համար խթան է հանդիսանում ինչպես գործառնությունների գրանցման համար սահմանվող սակագների մատչելիությունը, այնպես էլ գրանցված սեփականատերերին սպասարկման տեխնիկական և մասնագետների որակական բարձր մակարդակը:



Արժեքությունը փոխանցմամբ պայմանավորված զործառնություններ

Հաշվետու ժամանակաշրջանում Դեպոզիտարիայի կողմից գրանցած գործարքների ծավալների վերլուծությունը ավելի մատչելի դարձնելու համար նպատակահարմար է դրանք դասակարգել հետևյալ կերպ. *ցուցակված արժեքությունով բորսայական զործարքներ, ցուցակված արժեքությունով արտարորսայական զործարքներ և ցուցակված արժեքությունով զործարքներ:*

Ինչպես երևում է Գծապատկեր 5-ում բերված տվյալներից, Հայաստանի ֆոնդային բորսա ԻԿԿ-ում (այսուհետ Բորսա) ցուցակված արժեքությունով կատարվող գործարքները (ըստ գործարքի գնի) առաջին վեց ամիսների ընթացքում ունեցել են կտրուկ տատանումներ, այսուհետև նկատվում է գործարքների ծավալների համահունչ աճ: Գծապատկեր-5-ում բերված է 2002 և 2003 թվականների ընթացքում ցուցակված արժեքությունով Բորսայում կատարված զործառնությունների ընդհանուր ծավալները, հաշվարկված և՝ անվանական արժեքներով, և՝ գործարքի գներով: Ինչպես տեսնում ենք այդ միտումները համահունչ են: Ինչպես երևում է այդ գծապատկերից ըստ գործարքների գնի կառուցված գրաֆիկը զգալիորեն ցածր է գտնվում անվանական արժեքով հաշվարկված գրաֆիկից, որը կարելի է բացատրել այն հանգանակով, որ բորսայում ցուցակված արժեքությունը վաճառվում են իրենց անվանական արժեքից զգալիորեն ցածր արժեքով:


Բորսայում ցուցակված արժեքությունով կատարված արտարորսայական զործարքների վերաբերյալ կարելի է նշել, որ ինչպես և սպասվում էր, համեմատած բորսայում կատարված առուվաճառքի ծավալների հետ այն զգալիորեն փոքր է (տես Գծապատկեր 6): Եթե 2002 թվականի ընթացքում Բորսայում ցուցակված բաժնետոմսերով կատարված առուվաճառքի ընդհանուր ծավալները, հաշվարկած շուկայական գնով, կազմել են 818 649 622 ՀՀ դրամ, ապա ցուցակված բաժնետոմսերով կատարված արտարորսայական զործարքների ծավալները կազմել են 36 603 822 ՀՀ դրամ: Այս ցուցանիշները ժամանակագրային առումով բերված են Գծապատկեր 7-ում: Ցուցակված

արժեթղթերով բորսայական և ցուցակված արժեթղթերով արտաքրուսայական գործարքների ծավալների նմանօրինակ տարբերությունների համար կան մի քանի օրյեկտիվ պատճառներ: Նախ և առաջ, ցուցակված արժեթղթերով կատարվող արտաքրուսայական ծավալների փոքր չափերը պայմանավորված են ինչպես Դեպոզիտարիայի, այնպես էլ Բորսայի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմամբ, ինչպես նաև նշված ծառայությունների գների մատչելիությամբ: Դա կարելի է բացատրել Դեպոզիտարիայում գործող հաշվարկաթիմներին համակարգի կատարելագործմամբ, որի սկիզբ կարելի է համարել 2002 թվականի մարտ ամիսը: Գոյություն ունի մեկ հանգամանք ևս, որը պայմանավորված է շուկայում գործող մասնագիտացված անձանց իրազեկության և ներդրողների կողմից նրանց հանդեպ վստահության աստիճանի բարձրացմամբ, որը նույնպես բացատրում է 2002 թվականի առաջին կիսամյակում կատարված արտաքրուսայական գործարքների ծավալների մեծությունը:


Անդրադառնալով ցուցակված արժեթղթերով կատարված գործարքների ծավալների նկարագրին, ինչպես վկայում են Գծապատկեր 8-ում բերված տվյալները, կարելի է նշել, որ դեռևս պահպանվում են այդ բաժնետոմերով կատարվող գործառնությունների համեմատական մեծ ծավալները: Այս միտումները կարելի է բացատրել այն փաստով, որ Հայաստանի արժեթղթերի շուկայում առկա է թողարկողների մի մեծ զանգված, որոնք Օրենքի համաձայն չեն ենթարկվում պարտադիր գրանցման ենթակա բաժնետոմսերի պահանջին, սակայն ազատ շրջանառում են երկրորդային շուկայում: Այստեղ կարենք է առանձնացնել մեկ բացասական երևոյթ ևս, որը պայմանավորված է խոշոր բաժնետերերի կողմից մասն սեփականատերերին պատկանող բաժնետոմսերի ձեռք բերմամբ, որի արդյունքում թողարկված բաժնետոմսերի փաթեթը կուտակվում է մեկ խոշոր սեփականատիրոջ մոտ: Դա վկայում է այն մասին, որ կամ այդ թողարկողները կորպորատիվ կապիտալի ներգրավման կարիք չունեն, կամ էլ խուսափում են բաժնետոմսերի ազատ գնանշումից՝ բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը պոտենցիալ ներդրողներից զերծ պահելու նպատակով: Բացի այդ, ցուցակված բաժնետոմսերով կատարվող գործառնությունների իրականացման հաճախականությունը ավելի փոքր է, քան գործարքի ծավալներն են, որով էլ պայմանավորված է ցուցակված բաժնետոմսերով կատարվող գործարքների ծավալների մեծությունը:

Ինչ վերաբերում է ժառանգության և նվիրատվության հիմքերով արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնություններին, ապա կարելի է նշել, որ նվիրատվության գործառնությունները հիմնականում կատարվում են ազգակցական կապ ունեցող բաժնետերերի միջև և այդքան տարածված բնույթ չեն կրում: Ժառանգության մասով ևս ծավալները մեծ չեն, որը կարելի է պայմանավորել նախ և առաջ ժառանգորդների օրենքին անտեղյակությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ դրանց մեծ մասը բացակայում է հանրապետությունից:


Գծապատկեր-5




Գծապատկեր-6



Գծապատկեր-7






Արժեքդրերի արգելադրում

Արժեքդրերի արգելադրմամբ պայմանավորված գործառնություններից կարելի է դիտարկել միայն գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) հանձնարարազդով կատարվող արժեքդրերի արգելադրումների ծավալները։ Նմանօրինակ մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆոնդային բորսայում գործարքների կնքման համար արգելադրումների ծավալները լինիանուր առնամբ ներառվում են, արդեն դիտարկված, բորսայական առուվաճառքի գործարքների ծավալներում, իսկ դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի համապատասխան որոշման հիման վրա գրանցված արժեքդրերի արգելադրումները, իրենցից գործնական հետաքրքրություն չներկայացնելով, մեծ տեսակարար կշիռ չեն զբաղեցնում արգելադրված բաժնետոմսերի ընդհանուր ծավալում։

2002 և 2003 թվականների ընթացքում Դեպոզիտարիայում գրանցված սեփականատերերի հանձնարարազդերով իրականացվել է 16 290 475 000 (գումարային անվանական արժեքով հաշվարկված) ՀՀ դրամի չափով արժեքդրերի արգելադրման գործառնություններ (տես Գծապատկեր 9): Այս ցուցանիշի մեծությունը կարելի է բացատրել այն փաստով, որ ֆինանսավարկային ոլորտում, բանկերը և վարկատու մյուս կազմակերպությունները, վարկերի վերադարձելիության հուսալիությունն ապահովելու համար նախընտրում են որպես գրավ ընդունել արգելադրված բաժնետոմսերը և վերոնշյալ ծավալի զգալի մասը վերաբերում է հենց բաժնետոմսերի գրավի հիմքով կատարված արգելադրումներին։



Նշանակալից և խոշոր սեփականատերեր

Հաշվետու ժամանակահատվածում Դեպոզիտարիայում գրանցված են 305 նշանակալից և 641 խոշոր սեփականատերեր (համաձայն Օրենքի): Եթե նշված ցուցանիշները համեմատենք ՀԿԴ ԻԿԿ-ի հետ Պայմանագիր ունեցող ընկերությունների հետ, որոնց թիվը 603 է և գրանցված սեփականատերերի քանակության հետ՝ շուրջ 130 000, ապա կարելի է ասել, որ բողարկողների զգալի մասի մոտ առկա են և նշանակալից, և խոշոր սեփականատերեր: Իսկ գրանցված սեփականատերերի թվի հետ համեմատումը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ այդ բողարկողների կորպորատիվ կապիտալի զգալի մասը կուտակված է սեփականատերերի մի որոշ խավի ձեռքում:

Արժեքորերի ապանյութականացում

«Արժեքորերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն Դեպոզիտարիան ապանյութականացնում է՝ վերածում է ոչ փաստաթղթային ձևի հրապարակայնորեն վաճառվող արժեքորերը:

2002 և 2003 թվականների ընթացքում Դեպոզիտարիան ապանյութականացրել է թվով 274 բողարկողների հրապարակայնորեն վաճառվող փաստաթղթային արժեքորերը: Այդ գործընթացը զգալիորեն նապաստել է նշված բողարկողների բաժնետոմսերով կատարվող աժեքորերի փոխանցմանը պայմանավորված գործառնությունների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ներդրողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես կարելի է նշել, որ այդ միջոցառումները փաստաթղթային արժեքորերի սեփականատերերի զգալի մասին ապահովագրում են հնարավոր կեղծիքների իրականացումից: Ապանյութականացված արժեքորերով կատարվող գործառնությունները իրականացվում են բացառապես Դեպոզիտարիայում բացված գրանցված սեփականատերերի անձնական հաշիվներով, որը ևս նապաստում է բաժնետերերի սեփականության իրավունքի անարգել և արագ փոխանցմանը: Բացի այդ, կարևոր է նշել մի փաստ ևս, Օրենքով հաշվետու բողարկողների համար պարտադիր պայման է համարում ոչ փաստաթղթային արժեքորերի բողարկումը, որը հնարավորություն է ընձեռում բողարկողներին խուսափել անհիմն լրացուցիչ ծախքեր կատարելուց:

Բացի այդ, միջազգային պրակտիկան ցույց է տվել որ բաժնետոմսերի շրջանառության ոչ փաստաթղթային ձևը նպաստում է մասնագիտացված անձանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կրծատում է այն տրանզակցիոն ժախսքերը, որոնք կարող են առաջանալ փաստաթղթային արժեթղթերով իրականացվող գործառնությունների դեպքում:

ԳԼՈՒԽ 4. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության ապագա ծրագրերը

Հաշվետու ժամանակահատվածում՝ Դեպոզիտարիան լուրջ փոփոխություններ է մտցրել իր կողմից առաջարկվող ծառայությունների մատուցման որակի և դրանց դիմաց գանձվող վճարների չափի մեջ: Մասնավորապես, մեր հաճախորդներն այժմ հնարավորություն ունեն անվճար ստանալու մասնագիտական խոհրդատվություն մեր բարձարակարգ մասնագետների՝ իրավաբան-խորհրդատունների կողմից, ինչպես նաև սպառկվելու պրոֆեսիոնալ աշխատակիցների կողմից՝ ժամանակակից տեխնիկայով և անհարաժեշտ հարմարություններով օժտված գործառնական սրահում: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ 2002 թվականին Անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատված և ՀՀ արժեթղթերի հանձնաժողովում գրանցված «Դեպոզիտարիայի սակագների մասին կանոնների» համաձայն՝ Դեպոզիտարիայի կողմից առաջարկվող ծառայությունների, այդ թվում և անվճարական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայության, դիմաց գանձվող վճարները նվազեցվել են մոտ 30%-ով: Հստակեցվել և պարզեցվել են Դեպոզիտարիայի կողմից հարցումների և հանձնարարագրերի մշակման և ընդունման ընթացակարգերը, որոնք առաջին հերթին արվել են ի շահ Դեպոզիտարիայի հաճախորդների:

2004 թվականի ընթացքում մեր կողմից նախատեսվում է ընդլայնել Դեպոզիտարիայի կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակները, մասնավորապես՝

առաջին

Նախատեսվում է թղթակցային հաշվներ բացել ԱՊՀ մի շարք երկրների խոշորագույն դեպոզիտար կառույցներում: Ներկայումս այդ ուղղությամբ բանակցություններ են վարվում Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) խոշորագույն այնպիսի կազմակերպություններից երկուսի հետ, որոնցից են “Инвестиционная компания “Тройка Диалог” և “Депозитарно клиринговая компания”: Բանակցությունները մտել են պայմանագրի կնքման փուլ, որը հույս է ներշնչում, որ մոտ ապագայում ՀՀ քաղաքացիները ևս հնարավորություն կստանան մեր միջոցով դեպո հաշվներ բացել ՈԴ դեպոզիտարիաներում՝ ՈԴ թողարկողների արժեթղթերում իրենց խնայողությունները ներդնելու նպատակով: Այս տեսանկյունից դեպո հաշվի բացման և դրա հետագա սպասարկման գործընթացը բավականին պարզեցված կներկայացվի ռեզիլենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բացի այդ ԱՍՆ Սիջազգային զարգացման գործակալության և IBM BCS ընկերության կողմից իրականացվող «Հայաստանի կապիտալի շուկայի զարգացման ծրագրի» ջանքերով լուծվել է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի ISSA միջազգային կազմակերպությանը անդամակցության հարցը և ներկայումս այն գտնվում է պայմանագրի կնքման փուլում:

երկրորդ

Նախատեսվում է թողարկել դեպոզիտար ստացականներ: Համաշխարհային ֆինանսական շուկայում, մասնավորապես ԱՍՆ-ի շուկայում բավականին շատ է տարածված արտասահմանյան երկրների ընկերությունների բաժնետոմսերի

առուվաճառքը այսպես կոչված դեպոզիտար ստացականների միջոցով (DR՝ Depository Receipts):

Եթե համեմատության մեջ վերցնենք, Հայաստանի ֆինանսական շուկայում բացակայում է նման ածանցյալ, անուղղակի գործիքի կիրառությունը: Ուստի, ենելով Ամերիկյան շուկայի փորձից Հայաստանի համար հեռանկարային կարող է լինել այդպիսի մի ազրեգացված գործիքի ներմուծումը, որը կներառի արտասահմանյան ընկերությունների անվանական արժեքորերը: Այս գործընթացում սեփականառյան իրավունքի գրանցողի դերը կստանանի Դեպոզիտարիան, իրականացնելով այն արտասահմանյան դեպոզիտարիաներում բացված բոթակցային հաշիվների միջոցով:

Բացի այդ թողարկելով դեպոզիտար ստացականների, Դեպոզիտարիան հնարավորություն կընձեռի տեղական ֆինանսապես կայուն ընկերություններին առաջարկելու իրենց անվանական արժեքորերը արտասահմանյան շուկաներում:

Այս գաղափարների լավագույնս իրականացնող կարող է լինել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, որը դրա համար ունի թե՛ անհրաժեշտ տեխնիկական հագեցվածությունը, թե՛ գործիքում ներառվելիք թողարկողների մասին անհրաժեշտ ինֆորմացիան, ինչպես նաև այն հարուստ է որակյալ կաղըերով, որոնք ապագայում կկարողանան իրականացնել վերոնշյալ գործառույթները:

Երրորդ

Նախատեսվում է նպաստել Հայաստանում կենտրոնացված պահառության և պահառուական գործունեությունները կարգավորող ենթաօրենսդրական դաշտերի ձևավորման, ինչպես նաև այդ համակարգերի ներդրման և զարգացման գործին: ՀՀ արժեքորերի հանձնաժողովը իր 2003 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսել է կենտրոնացված պահառության համակարգի և անվանատիրոջ ինստիտուտի ներդրման նպատակով մշակել և ընդունել Դեպոզիտարիայի կողմից կենտրոնացված պահառության գործառույթի իրականացումը կարգավորող համապատասխան իրավական ակտ: Այս գործում իր անմիջական աջակցությունն է ցուցաբերելու Դեպոզիտարիան, քանի որ համարժեք կարգավորման սկզբունքները հնարավոր կլինի վերհանել միայն կենտրոնացված պահառության, պահառության և ռեստրավարման ինչպես տեղական այնպես էլ միջազգային փորձերի ուսումնասիրման և վերլուծության արդյունքում: Բացի այդ Դեպոզիտարիան իր աջակցությունն է ցուցաբերելու նաև ՀՀ արժեքորերի հանձնաժողովի կողմից անվանատիրոջ ինստիտուտի ներդրման նպատակով մասնագիտացված անձանց կողմից պահառության գործառույթի իրականացումը կարգավորող համապատասխան իրավական ակտի մշակմանը և դրա արդյունքում ենթապահառուների գործունեության ծրագրային համակցմանը Դեպոզիտարիայի աշխատանքային համակարգերին: Դրանց արդյունքում կսահմանվեն և կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ ուղղված շուկայում համակարգային ռիսկերի նվազեցմանը՝ նպաստելով շուկայի իրացվելությանը:

Չորրորդ

Դեպոզիտարիան նախատեսում է 2004 թվականին թողարկողների և ներդրողների շրջանակներում լայնածավալ բացատրական աշխատանքներ իրականացնել: Քանի որ թողարկողները և ներդրողները բավարար տեղեկացված չեն Դեպոզիտարիայի կողմից առաջարկող ծառայությունների մասին, այսինքն՝ թողարկողները ամբողջությամբ չեն պատկերացնում Դեպոզիտարիայի ծառայություններից օգտվելու առավելությունները, որի արդյունքում էլ ներդրողները զրկված են իրենց վերապահված իրավունքների իրականացման հնարավորությունից: Թողարկողներին և ներդրողներին Դեպոզիտարիայի ծառայություններից օգտվելու վերաբերյալ, իր իսկ կողմից, լուսարաննան աշխատանքները հիմնականում կիրականացվեն Հայաստանի Հանրապետության տարածքում ըստ նարգերի, ուսուցողական սեմինարների կազմակերպման և անցկացման, հոդվածների տպագրման, բացատրական նյութերի պատրաստման, իրապարակման և տարածման, ինչպես նաև գովագրային հոլովակների պատրաստման և հեռարձակման

միջոցով: Թողարկողների և ներդրողների շրջանակներում լուսաբանման աշխատանքների իրականացումը նպաստելով Դեպոզիտարիայի ծառայությունների շուկայի աճին կրերի հաշվարկա-քիրինգային համակարգի զարգացմանը, որն էլ կնպաստի արդյունավետ շուկայի ձևավորման նախադրյալների ստեղծմանը: Չե որ ներդրումային որոշումների կայացումը ներդրողների կողմից առաջնորդվում է այդ ոլորտում իրենց իրավունքների պաշտպանմամբ:

ԳԼՈՒԽ 5. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության 2002 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, գործունեության վերաբերյալ անկախ առողջտորի եզրակացությունը

Հափի միավ.

Հաշվապահական հաշվեկշիռ առ. 01.01.2003թ.

հազ.դրամ

ԱԿՏԻՎ	ՍՊՆԴ	ԾԱԽՈՐԴ ՄԱՐ- ՎԱ ՎԵՐԺԻՆ	ՀԱՇՎԵՏ.ՄԱՐ. ՎԱ ՎԵՐԺԻՆ
1	2	3	4
1. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	O10	3291	2286
Ոչ նյութական ակտիվներ	O30	238	128
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	O80	3529	2414
11.Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	O90	—	117
Արագաճաշ առարկաներ	110	3387	1426
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	260	320
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170		665
Այլ դեբիտորական պարտքեր	180	24584	29115
Դրամ. միջ. և դրամ համարժեներ	200	15722	11874
Այլ ընթացիկ ակտրվներ	210	1686	1686
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	45640	45203
Հաշվեկշիռ	230	49169	47617

ՊԱՍԻՎ	ՍՊՆԴ	ԾԱԽՈՐԴ ՄԱՐ- ՎԱ ՎԵՐԺԻՆ	ՀԱՇՎԵՏ.ՄԱՐ. ՎԱ ՎԵՐԺԻՆ
1	2	3	4
111.Սեփական կապիտալ			
Կուտակված շահույթ	270	45323	46466
Ընդամենը սեփական կապիտալ	300	45323	46466
1Y. Ոչ ընթացիկ պարտավոր.			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0	0
Y. Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտ. պարտքեր գնումների գծով	390	0	46
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	1776	0
Կարճաժամկետ. պարտք բյուջեին	410	1899	1105
Կարճաժամկետ. պարտք բյուջեին. գծով.	420	83	0
Այլ կրեդիտորական պարտքեր	450	88	0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	3846	1151
Հաշվեկշիռ	500	49169	47617

‘Նեկավար՝

Գլխ. հաշվապահ՝

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվորյուն Ձև N 2

2002թ. տարեկան

չափի միավ.
հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	Սոռն.	նախորդ տարի	հաշվետվո տարի
1	2	3	4
Ծառայությունների իրացումից հասույթ	O10	55361	54204
Ծառայությունների ինքնարժեք	O20	-25199	-21512
Համախառն շահույթ (վնաս)	O30	30162	32692
Վարչական ծախսեր	O50	0	-38275
Ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	O60	30162	-5583
Գործառնական այլ եկամուտներ	O70	13535	22546
Գործառնական այլ ծախսեր	O80	-11607	-14933
Գործառնական շահույթ (վնաս)	O90	32090	2030
Ակտիվների վաճառքից շահույթ	120	250	0
Արտարժույթի մնացքաց տարբերութ.	130	0	-73
Սովորական գործուն.շահույթ.(վնաս)	144	32340	1957
Շահութահարկի գծով ծախս	170	1278	814
Զուտ շահույթ	180	31062	1143

Ղեկավար՝

Գլխ. հաշվապահ՝

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ՁևN4

չափի
միավ.
հազ.դրամ

Ցաշվետու տարի 2002թ.	այդ			թվում			ԴԱՀ	
	Տողանիշի անվանումը	տող	գումարը	դրամարկղ		արտաքինություն		
				դրամ	դրամ			
1	2	3	4	5	6	7	8	
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	O10	15722	518	4758	658	9788		
Գործառնական գործունեությունիցդրամական միջոցների մուտքեր								
այդ թվում								
Աշխատանքների, ծառայությունների իրացումից	O20	56787	29651	27136				
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	O30	2742	1359	1383				
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	O40	59529	31010	28519				
Գործառնական գործունեությունից ելքեր								
այդ թվում								
Ծառայությունների մասուցման գծով	O60	15843	6343	9500				
Վճարումներ աշխատակիցներին	O70	32271	16616	15655				
Վճարումներ բյուջե	O80	8915		8915				
Վճարումներ սոցապ. հիմնադրամ	O90	6039	349	5690				
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	100	1013	519	494				
Ընդգործառ. գործուն. ելքեր	110	64081	23827	40254				
Գործառն. գործուն. դրամ. միջոցն. զուտ հոսքեր	120	-4552	7183	-11735				
Ներդրումային գործունեությունից մուտքեր ընդ.	170	7289		7289				
Ներդրումային գործունեությունից ելքեր ընդ.	210	6512				6512		
Ներդրում. գործուն դրամ. միջոցն. զուտ հոսքեր	220	777		7289			-6512	
Արտաքինությունից փոխարժ. բացաս. տարբերություն	340	-73				-73		
Ներքին շարժեր	330		-7370	7370				
Դրամ. միջոցների մնացորդը հաշվ. ժամ. վերջին	350	11874	331	7682	585	3276		

Դեկապար՝

Գլխ. հաշվապահ՝